ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



ԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՄԻԱՏԵՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

1994 թվականի օգոստոսի 25-ին, ժամը 18-ին, Վեհարանում տեղի ունեցավ Եպիսկոպոսաց և Գերագույն Հոգևոր Խորհրդի միատեղ ժողով՝ ընդ նախագահության Մայր Աթոռի երիցագույն միաբան Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի՝ լուսարարապետ Մայր տաճարի: Միացյալ ժողովին մասնակցում էին՝

Ն. Ա. Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան՝ Պատրիարք Երուսաղեմի
Ն. Ա. Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյան՝ Պատրիարք Հայոց Թուրքիո
Տ. Գնել արքեպիսկոպոս Ճերեճյան
Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյան
Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյան
Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյան
Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյան
Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյան
Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյան
Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյան
Տ. Արսեն արքեպիսկոպոս Պերպերյան
Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան
Տ. Եղիշե արքեպիսկոպոս Կիզիրյան
Տ. Ռսկան արքեպիսկոպոս Գալփաքյան
Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյան
Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյան
Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան
Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան
Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիպյան
Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյան
Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան
Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան
Տ. Հովհան արքեպիսկոպոս Տերտերյան
Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայտարյան

Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան
Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյան
Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյան
Տ. Վահան եպիսկոպոս Թոփալյան
Տ. Սեան եպիսկոպոս Ղարիպյան
Տ. Ատողիկ եպիսկոպոս Արիստակեսյան
Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան
Տ. Գիսակ եպիսկոպոս Մուրատյան
Տ. Հակոբ եպիսկոպոս Գըլընճյան
Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյան
Տ. Գարեգին եպիսկոպոս Պեքճյան
Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյան

Տիարք՝
Գրիգոր Խանջյան
Հակոբ Փափազյան
Պիոն Հակոբյան
Ռաֆայել Պապայան

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, ապա նախագահը ծանուցեց Վեհափառ Հայրապետի մահվան առիթով հրավիրված ժողովի ընտրվելիք օրակարգը, որը բաղկացած էր մեկ կետից. Կաթողիկոսական տեղապահի ընտրություն: Այնուհետև հոտնկայս արտասանվեց «Հոգւոց» և «Քրիստոս Հրդի Ատուծոյ» աղոթքը: Նախագահը առաջարկեց կազմել Դիվան: Խաժակ Սրբազանը որպես ատենապետներ առաջարկեց երկու Պատրիարքներին, իսկ Գարեգին եպիսկոպոս Պեքճյանը երկրորդեց առաջարկը. առաջարկությունը քվեարկվեց և անցավ միաձայն: Որպես ատենադպիրներ առաջադրվեցին Հովնան և Ատողիկ Սրբազանները Տիրայր Սրբազանի կողմից. առաջարկը երկրորդեց Գրիգորիս Սրբազանը: Առաջարկը քվեարկվեց և անցավ միաձայն: Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը հայտարարեց, որ Վեհափառ Հայրապետը թողել է մի Հրաման, ուղղյալ բոլորին, ի պահ տրված հինգ անձերի մոտ: Շահե Սրբազանը ժողովականների ուշադրությունը հրավիրեց Վեհափառ Հայրապետի կողմից վավերացված Ներքին Կանոնադրության 9-րդ հոդվածի վրա, որին անդրադարձավ նաև Գյուտ Սրբազանը: Ժողովականները հաստատեցին այն հանգամանքը, որ ժողովը հրավիրվել է Մայր Աթոռի երիցագույն միաբանի հեռագիր-հրավերով, ուղղված առանց բացառության բոլոր եպիսկոպոսներին և ԳՀԽ չորս աշխարհական անդամներին: Ժողովի ատենապետ Տ. Գարեգին Պատրիարքը ճշտեց ներկաների ցանկը և ազդարարեց, որ հրավիրյալներից իրենց մասնակցություն են բերել 39 անձ (35 եպիսկոպոս-արքեպիսկոպոսներ և 4 աշխարհականներ): Պրն. Խանջյանը առաջարկեց ընթերցել վախճանյալ Կաթողիկոսի 7 մայիսի 1993 թվակիր գրությունը, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Ներսես Սրբազանը: Ժողովը ի գիտություն ընդունեց ընթերցված գրությունը, իսկ ատենապետ Թորգոմ Պատրիարքը լուսաբանություններ տվեց գրության մասին: Տեղի ունեցան մտքերի փոխանակումներ ընթերցված գրության շուրջ, անդրադառնալով հիմնականում այն հակասության շուրջ, որ կա ընթերցված գրության 2-րդ կետի և Ներքին Կանոնադրության 9-րդ հոդվածի միջև: Ժողովի ճնշիչ մեծամասնությունը հաստատեց, որ ժողովը գումարվել է համաձայն ներքին Կանոնադրության 9-րդ հոդվածի, որը և մնում է միակ իրավական հիմք: Ատենապետ Թորգոմ

Պատրիարքը կրկին անդրադառնալով օրակարգի միակ հարցին, ձայն տվեց Գարեգին Պատրիարքին, որն էլ իր հերթին լուսաբանություններ տվեց Կաթողիկոսական տեղապահի ընտրության ձևի մասին: Բազում կարծիքներից հետո ժողովը եկավ ընդհանուր մեկ եզրակացության: Այն է՝ առաջին փուլում առաջին երեք առավել ձայներ ստացողները քվեարկվելու իրավունք կունենան մասնակցելու երկրորդ փուլին: Երկրորդ փուլում ներկա քվեարկողների ձայների 50%+1 ձայն ստացող թեկնածուն համարվում է ընտրված:

Կազմվեց քվեախույզ հանձնախումբ հետևյալ կազմով:

Տիրայր, Գևորգ, Հովնան, Ասողիկ Սրբազաններ և տիար Ռաֆայել Պապայան:

Տեղի ունեցավ ընտրության առաջին փուլը: Քվեարկությանը մասնակցեցին 39 ընտրող: Քվեատուփ նետվեցին 39 քվե: Քվեատուփը բացելուց հետո դուրս հանվեցին 39 քվե: Ձայները բաշխվեցին հետևյալ կերպ՝

Թորգոմ Պատրիարք Մանուկյան—16 ձայն
Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան—10 ձայն
Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան—7 ձայն
Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան—4 ձայն
Արսեն արքեպիսկոպոս Բերբերյան—1 ձայն
Անվավեր ճանաչվեց 1 քվե:

Համաձայն որդեգրված ընտրության եղանակի, երկրորդ փուլին քվեարկվելու իրավունք ստացան Թորգոմ Պատրիարքը, Գարեգին արքեպիսկոպոսը և Ներսես արքեպիսկոպոսը: Տեղի ունեցավ ընտրության երկրորդ փուլը: Քվեարկությանը մասնակցեցին 39 ընտրող: Քվեատուփ նետվեցին 39 քվե: Քվեատուփը բացելուց հետո դուրս հանվեցին 39 քվե: Ձայները բաշխվեցին հետևյալ կերպ՝

Թորգոմ Պատրիարք Մանուկյան—20 ձայն
Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան—16 ձայն
Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան—2 ձայն
Անվավեր ճանաչվեց 1 քվե:

Այսպիսով Կաթողիկոսական տեղապահ ընտրվեց 20 ձայն ստացած Երուսաղեմի Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը: Ատենապետ Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գասպանճյանը, իր և ժողովականների անունից շնորհավորելով ընտրյալ տեղապահին մաղթեց բեղմնավոր գործունեություն և հրավիրեց իր շնորհակալական խոսքը ասելու: Ընտրյալ Տեղապահը շնորհակալություն հայտնելով ժողովին հավաստիացրեց, որ բարձր գիտակցելով իրեն հանձնված պարտականությունները, նա կանի ամենայն ինչ, հանուն Հայ Առաքելական Եկեղեցվո բարգավաճման և ծաղկման:

Կկազմակերպի և կհրավիրի Ազգային-Եկեղեցական ժողով՝ ընտրելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոս: Աղոթքով և օրհնությամբ ժողովը հայտարարվեց փակված:

ԱՏԵՆԱԴՊԻՐՆԵՐ՝

Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ
Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
26 օգոստոսի 1994 թ.